

հայրենակիցները — մէջն ըլլալով կրօնաւորները եւ հասարակ ժողովուրդը, — անոնց հողակոյսը այցելած էին, որպէս զի ատով Հայերուն վիշաբ կարհնան միւթարել և մանաւանդ ջնջել ամօթալի մէկ էջը քաղաքակրթութեան պատմութեան :

Այսպէս, բնականաբար ոչ ոք կը փափագէր դարձեալ կրկնուած տեսնել, ի՛նչ չափով որ ըլլայ, նոր դէպքեր՝ որոնք անցեալ սղբերգութիւնները յիշեցնէին :

Սակայն, բարէ՛, ստիպուած եմ հրապարակաւ յայտարարելու որ իմ անձնական հաստատումներս զիս բողոքովին յուսախաբ ըրին :

Թող ըսեն ի՛նչ որ կ'ուզեն : Ամէն ոք իր սեփական կարծիքը ունի : Ըստ իս, նմանօրինակ դէպքերու կրկնութիւնը անվրէպօրէն արգիլելու միակ միջոցն է՝ ճշմարտութիւնը ծանօթացնել այնպէս՝ ինչպէս որ է, առանց ամենափոքր վերադահութեան : Եթէ, ընդհակառակը, ջանք տարուի այս դէպքերու մեծութիւնը նըւազեցնել, և թէ ուզուի պատասխանատուութեան բաժին մը վերագրել զոհերուն, ատկա՛ իմ կարծիքով պիտի նշանակէր՝ բաց ճամբայ մը ձգել միեւնոյն դէպքերու կրկնութեան :

Անա՛ թէ ինչո՛ւ կ'ուզեմ յստակօրէն և անկեղծութեամբ ոչ ոքի դէմ խնայելով Ձեզ ծանօթայնել արգիւնքը իմ քննութիւններուս և հաստատումներուս :

Տասներչորս տարեկանէս սկսեալ կեանքիս մեծ մասը անցուցած եմ քաղաքական խռովութիւններէ փութորկուած միջավայրերու մէջ : Պուլկարական ապստամբութեան միջոցին Սօֆիա կը գանտ էի. թուրքերուս պատերազմի ատեն Պոնիա էի՝ կատարեալ քաղաքային պատերազմի մէջ : Կ. Պոլսոյ և Բերք-Բիլիսէի ջարդերուն սկանառես վկան եղած եմ : Սակայն երբէք չեմ տեսած և ոչ իսկ կրցած եմ երեակայել սարսափներ՝